



ՀԱԿՈԲ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԳՎԼՆՇՅԱՆ

ՄԱՐԹԻՆ ԼՈՒԺԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1520 թվականի կեսերին Լուժերի հակամարտությունը պապականության հետ այն ատտիճան էր արվել, որ համաձայնության գաղու կամ կացությունը մեղմելու որևէ հնարավորություն այլև չկար: Նման եղուակացության էին հաճակը ոչ միայն պապականները, այլև հենց ինքը՝ Լուժերը:

Ի դեպ, Լուժերը լինելով անխոնջ մի աշխատող՝ ասէցուցիչ կարողությամբ և հետևողականությամբ պատասխանում էր իր հակառակորդների բոլոր գրություններին: 1519 թվականին նրա բեկուց գրչից դուրս եւան գերմաներեն լեզվով գրված այնպիսի կրոնական ճառեր, որոնք հետագարում առանցք կազմեցին 1520 թ. նրա բարեկանորդչական գլխավոր գրությունների: Հիշյալ ճառերը նվիրված էին «Հայր մեռ»-ի մեկնությանը, Քրիստոսի չարչարեներին, Սվագ շաբաթին, ապաշխարությանը, խոստվանաքին, ամուսնության, մկրտության և ս. Հաղորդության խորհութներին, Քրիստոսի ծննդյանը, Տասնարանյա պատվիրաններին, վաշխառությանը, ինչպես նաև մահվան նախապատրաստվելու անհրաժեշտությանը:

Այս բարեպաշտական ճառերում Լուժերը ընդհանրապես չի շեղվում Եկեղեցու որդեգրած ավանդական տեսակետներից: «Մահվան նախապատրաստվելու անհրաժեշտության» մասին գրեիս՝ նա նոյնիսկ հանձնարարում է դիմել սրբերի, հրեշտակների և Աստվածամոր բարեխոսությանը:

Միայն մի քանի դեպքերում պրտահայտում է նոր տեսակետներ, երբ, օրինակ, խոսում է բոլոր հավատացյալների ընդհանրական քահանայության կամ ս. Հաղորդության առթիվ Տիրոց մարմնի և արյան բաշխման մասին:

Բարեպաշտական այս գրությունների վրա պետք է ավելացնել նաև հետևյալը. «Դորեքտասան պատճառք միսիթարութեան վասն վաստակեալ և ծանրաբեռնեալ անձանց (Tessaradecas consolatorio pro Laborantibus et Oneratis), որը խմբագրվել էր լատիներեն և գերմաներեն լեզուներով ու նվիրվել կայսրընտիր Ֆրիդրիխ Խմատոնմբին, իբրև միսիթարանք Ընդուն, որովհետև կայսերական ընտրության մասնակցելուց հետո նա միշտանդացել էր: Սույն աշխատության մեջ նկատի են առնված մարդկանց պատահող չարիքները, որոնք չեզոքանում են Քրիստոսվ, նրա հանդեպ հավատով, նրա կողմից մարդկանց արդարանալով: Դրա համար էլ Քրիստոսվ արդարանալը Լուժերի կողմից նկատվում է միսիթարությունների մեծագույն պատճառը:

1520 թվականին Լուժերը հրատարակում է Եկեղեցու բարեկարգության վերաբերյալ իր գլխավոր գրությունները.

ա. «Ճառ վասն բարի գործոց»:

բ. «Յաղագս պապականութեան ի Հոռիմ. ընդդեմ մեծանոշակ նոովմէականին ի Լալացից»:

գ. «Առ քրիստոնեայ ազնուականն գերմանացոց»:

դ. «Յաղագ Եկեղեցոյ բարելոնեան գերութեան»:

է. «Յաղագ ազատութեան քրիստութիւն»:

1. «Ճառ վասն բարի գործոց»-ը, որ ձոնված է Սաքսոնիայի Ցոհաննեան դքսին՝ կայսրների Ֆրիդրիխ Խմատունի եղբարութիւնուն, համարվում է ճախերգանքը լոյթերական բարեկարգության: Մինչ այդ Լոյթերը հաճախ արտահայտվել էր միայն հավատով արդարանալու հմարավորության մասին, որի համար էլ շատերը մեղադրում էին նրան՝ ասելով. «Միայն հավատով արդարանալու վարդապետությունը, որ դու քարոզում ես, և որը դատապարտում է յուրաքանչյուր բարոյական կամ ճգնավորական նկրտում, շնչում և արհամարիում է բարի գործերը»¹:

Սակայն երբ Լոյթերը շեշտը դնում է հավատով արդարանալու վրա, թեավ չի ուզում ստորագնահատել գործերը: Հայ նրա, հավատը այն ծառն է, որ Սուրբ Հոգու միջոցով բուսնում է մարդու հոգում, և բարի ծառը ճանաչելի է դատնում միայն իր տված պատութերից, իսկ այդ պատութերը, այս դեպքում, հավատի արգանքը հանդիսացող բարի գործերն են: Նա գրում է.

«Սուուահն հերթին պետք է իմանալ, որ լավ գործերը միայն այն գործերն են, որոնք Սատուն կողմից են պատվիրված, ինչպես որ մեղքերը միայն այն մեղքերն են, որոնք Սատուն կողմից են արգելված: Դրա համար էլ ով կամենում է բարի գործերը ճանաչել կամ կատարել դրանք, բավական է, որ ճանաչի Սատուն պատվիրանները: Քրիստոս ասպես է պատգամում. «Եթե կամենում ես հավիտենական կյանք մտնել, պահի՛ր պատվիրանները» (Մտք. ԺԹ 17): Իսկ երբ երիտասարդը հարցնում է Քրիստոսին, թե ի՞նչ պետք է անի դրա համար (Մտք. 18), առ Տանարանյա պատվիրաններից բացի՝ այլ բան չի դնում նրա առաջ: Հետևաբար, մենք պետք է սովորենք գնահատել բարի գործերը համաձայն ատավական պատվիրանների և ոչ թե ելնելով դրանց արտաքին երևությունից, մեծությունից կամ քանակից, ոչ էլ համաձայն մարդկային բարեհաճության, օրենքների կամ տեսակետների, մի բան, որ նախկինում կատարվել է և այժմ էլ տեսնում ենք, թե կատարվում

է որպես մեծագույն արհամարհանք աստվածային պատվիրանների:

«Սուուահն ամենավայր և ազնվագույն բարի գործը հավատուն է հանդեպ Քրիստոսի, ինչպես որ նա ասում է, երբ հրեաները հարց են տախի նրան. «Են անենք, որ Սատուն ուզած գործերը գործենք» (Հովի. Զ 28). «Սատուն ուզած գործը այս է որ հավատաք նրան, ում նա ուղարկեց», ինուս է պատափանք: ...Այս գործի մեջ պետք է պարփակվեն մնացյալները և սրանից պետք է ստանան իրենց բարության դրոշմը. այս մեկը ուժող կերպով պետք է ընդգծենք, որպեսզի հասկանի դառնա բոլորին:

«Ծանաչում ենք շատերին, որոնք աղոթում են, ծով պահում, հաստառություններ հիմնում, այս կամ այն բանն են իրագործում, մարդկանց առաջ բարի կյանք վարում: Սակայն եթե դու նրանց հարց տաս, թե արդյոք վատա՞ն են, որ այն, ինչ կատարում են, համեմի է Սատուն, պատափանքը կիմնի՝ ո՞չ: Նրանք այդ չգիտեն կամ էլ կակածում են իրենց արածի վրա: Բացի այդ, կամ իմաստուններ, որոնք նորանց մոլորեցնում են՝ ասելով, որ անհրաժեշտ չէ վատահ լինել իրենց կատարած գործի մասին, թե այն աստվածահան» է կամ ոչ. դրա համար էլ որիշ բան չեն անում, բացի նրանց բարի գործեր սկսորեցնելոց: Ն վերջո հիշյալ բոլոր գործերն էլ հավատից դուրս են, հետևաբար դրանք ոչնչություն են: Այս իսկ պատճառով երբ ես շեշտում եմ հավատի կարուրությունը և դատապարտում անհավատ գործերը, մեղադրվում եմ նրանով, որ իր ես արգելում եմ բարի գործերը, մինչդեռ ես արանք պետք է արդյունանալ Սատուն, պատափանքը դարձալ լինում է՝ ո՞չ, որովհետև նրանք այնքան սահմանափակվուն են բարի գործերը, որ իրը արբախիք նկատի ունեն միայն եկեղեցում ալորթելը, ծովապինությունը ու ողորմությունը տալը. մնացյալները նրանց համար համարվում են անօգուտ և Սատուն առաջ էլ՝ անարժեք»²:

¹ M. Luther, Ausgewählte Schriften, Frankfurt/M., 1983, I, էջ 41—43,

² Ricardo García-Villalada, Martín Lutero, I, Madrid 1976, էջ 444.

Այս կապակցությամբ կաթոլիկ մի հեղինակ մեղադրում է Լութերին՝ ասելով. «Լութերը չի կարդացել սուրբ հայրերի, միշտն դարի աստվածաբանների և Պողոս առաքյալի թղթերը մեկնողների երկերում, թե աշխատելը, ուտելը, խմելը կամ որևէ այլ գործ կարելի է և պետք է կատարել «Աստուծո փառքի համար» (Ս. Կորնել. Ժ 31):³

Վերոհիշյալ մեղադրանքն անշուշտ ասելով է: Լութերի հավատակը ոչ թե մի նոր վարդապետություն առաջ քաշելն է, այլ գործություն ունեցող ճշմարտությունը վերականգնելը, ինչ որ բարի գործերի դեպքում խախտվել էր շատերի մեջ կամ մոռացության տրվել. իսկ հավատը բոլոր բարի գործերի հախապայմանը համարելով՝ նա հանելեւ է գալիս իրեն ճշմարտ քրիստոնյա, որի յուրաքանչյուր խոսքը, մտածումը կամ շարժումը մղված պէտք է լինի հավատից: «Ամենայն ինչ, որ հավատից չէ, մեղք է» (Հոռմ. ԺԴ 23): Հավատի և գործերի հարաբերակցության մեջ Լութերի բերած նոր տեսակետը միայն այն է, որ նա հավատին է տալիս նախապատվությունը, հավատ, որ միայն գործերի մեջ է դրակում և գործերի միջոցով տալիս իր արդասիքը, այլպես առաքյալի ասածի նման կինը. «Հաւատ առանց գործոց մեռնեալ է» (Հակոբոս Բ 17):

2. «Յաղագ պապականութեան ի Հընդէմ մեծահոչակ հոռվիմէականին ի Լազպիգ»: Այստեղ «մեծահոչակ հոռվիմէական» ասկով Լութերը նկատի ունի Սուգուստիկ Ալֆերին (1480—1535), որն անդամ էր Լազպիգի Ֆրանցիսկյան միաբանության և որը 1520 թվականի ապրիլին լատիներեն մի գրություն էր խմբագրել Լութերի դեմ պապություն, որ պապականությունը հաստատված է Ս. Գրքի խոսքերի վրա և որու համար է աստվածահաստատ մի իշխանություն է: Լութերը անձամբ չէր պատասխանել այդ գրությանը, սակայն շուտով Ալֆերը միևնույն հարցի շուրջ հրատարակում է մի գրքով գերմաներեն լեզվով:

Այս պարագան առիթ է տալիս Լութերին մի անգամ ևս հրապարակ իշնելու, որովհետև վերոհիշյալ գերմաներեն գրքովը կարող էր մոլորեցնել պարզ ժողովրդին և շատերին իր դեմ լարել: Այս մոտահինգորյամբ էլ նա գրում է իր պատմանանը՝ «Յաղագ պապականութեան ի Հոռվմ. ընդէմ մեծահոչակ հոռվիմէակա-

նին ի Լազպիգ»: «Մեծահոչակ» բառը այստեղ ծաղրական իմաստով է գործածված:

Լութերը դեմ է եղել կղերաբետության: Նրա համար իսկական քրիստոնեությունը Քրիստոսի բոլոր հավատացյալների միաբանությունն է երկրի վրա, որի միակ գրլուխը Հիսուսն է: Նա ասում է.

«...Եթե պապականությունը աստվածային կարգավորությամբ անվիճելի իշխանություն ունի ամրող քրիստոնեության վրա, ապա ուրեմն կարելի է ասել, իրու քրիստոնյա, թե աշխարհի բոլոր այն քրիստոնյաները, որոնք չեն ենթարկվում Հոռմի, ենթեսիկու են և հերձվածող, եթե նույնիսկ մեզ նման նրանք միևնույն մըկըրտությունը, միևնույն խորհուրդը, միևնույն Ավետարանն ու հավատող հանգանակներն ունեն, լոկ այն տարբերությամբ, որ նրանց իրենց եախակոպուներին և քահանաներին Հոռմի կողմից հաստատել չեն տալիս կամ այդ իշխանությունը փողով չեն գնում, ինչպես որ այժմ անում են այստեղ. նրանք թույլ չեն տալիս, որ մեկը ծաղը ու ծանակի առարկա դարձնի իրենց, մի բան, որ գերմանացիները թույլ են տալիս: Այդպիսի քրիստոնյաներից են մուկացիները, սպիտակ ոուսները, հովերը, բոհեմացիները և այլ բազմաթիվ մեծ ժողովորներ աշխարհի մեջ:

«Արդ, ինչպես ես հաստատել եմ, այժմ էլ հաստում եմ, որ վերոհիշյալ քրիստոնյաները ո՞չ ենթեսիկուներ են և ո՞չ էլ հերձվածող: Նրանք միգուցե նոյնիսկ մեզանից էլ լավ քրիստոնյաներ են, անշուշտ որոշ բացառություններով, ինչպես որ մեզանից ոչ բոլորը լավ քրիստոնյաներ են...:

«Ոչ որ պետք է այնքան հիմար լինի կարծելու համար, թե պապի և նրա բոլոր հետևողների ու շղողքորթների լուրջ համոզմունքն է այն, որ պապական մեծածավակ իշխանությունը աստվածային տնօրինման արդյունքն է: Այս բանը երևում է նրանից, որ աստվածային կարգավորությունների նոյնիսկ ամենաշնչին տառն էլ չի հարգվում Հոռմում, այլ, ինչպես երևում է, դրանք իրեւ հիմարություն ծաղրի են ենթարկվում, երբ մեկը ակնարկություն է անում դրանց մասին: Նրանք նոյնիսկ կարող են հանդուրժել, որ ամրող աշխարհում Ավետարանն ու քրիստոնեական հավատը գետինը մտնեն, միայն թե մի մազ անգամ չպակասի իրենց գլխից: Բացի դրանից, հոգերը և աշխարհիկ ստահակությունների բոլոր վար օրինակները հորդում են Հոռմից, ինչպես մի ծովից ամեն տեսակ պապականություն՝ համայն աշ-

³ Ricordo Garcia—Villoslada, Martin Lutero. I, էջ 445.

խարհում: Հոյով այդ բոլորի վրա ծիծառում է, իսկ նա, ով ողբում է դրանց վրա, նա միաևիս քրիստոնյա է նկատվում, այսինքն՝ հիմար: Խոչ եթե նրանց համար աստվածային տնօրինությունն իւլյանէն լորջ հշանակությունն ունենար, նրանք պետք է զբաղվեին հազարավոր հրատապ խնդիրներով և հատկապես այնպիսի խընդիրներով, որոնց վրա այժմ ծիծառում են: Հակոբոս առաքյալն ասում է. «Նա, ով մեկ բանով միայն սպասարկում է օրենքի հանդեպ՝ պարտական կիննի ամրող օրենքին» (Հակոբոս Բ 10): Հետևաբար ո՞վ պիտի ուզենար այնքան տիմար լինել հավատապու համար, թե նրանք աստվածային կարգավորությունն լոկ մի մասի մեջ են փնտրում, եթե նրանք մնացյալ մասերը ծաղրի են ենթարկում»:

Խակ Պետրոս առաքյալի գիշավորության
մասին, որից ելենը պատր, իբրև հա-
ջորդ՝ Պետրոսի, իրեն իրավունք է վերա-
պահում ամբողջ քրիստոնեության գիշա-
վորը լինելու, Լույսնը հետևյալն է գրու.

«Եր խոսքով և պատգամով Քրիստո
իր բոլոր աշակերտներին համահավասար
իշխանություն տաղով՝ նրանց ուղարկեց
աշխարհով մեկ։ Խնչպես որ Պողոս առաք-
յան է ասում «Մենք պատգամավորներ
ենք Քրիստոսի համար» (Բ Կորնթ. Ե 20)
և կամ «Ով է Պետրոսը՝ կամ ո՞վ է Պո-
ղոսը, պատշոնաներ, որոնցով համատա-
ցիք» (Ա Կորնթ. Գ 5): Պատգամավորի
պաշտոն ունենալի նշանակում է արձակել,
կառավարել, կախուսուու լինել և հմանօ-
րինակ այլ գործեր կատարել։ Բայց երբ
պատը Աստուծո բոլոր պատգամավորնե-
րին իրեն է ենթարկում, աևու է այն միև-
նույն բանը, ինչ որ պիտի աներ մի իշխա-
գի պատգամավորը, երբ փորձեր կանգ-
նեցնել իր մոտ պաշտոնակիցներին և
նրանց իր կամքի համաձայն ուղարկել,
իսկ ինքն իր տեղից չշարժվեր։ Դա հաճե-
լի կիմներ իշխանին, անշուշտ թե առ
նկատի կառներ այն։

«Խակ եթէ դու այսուհանդերձ ասես՝ «Սլոն», ստույգ է, որ մի պատգամակոր կարող է վերադաս լինել մի որիշչից», ևս էլք կասեմ, թէ՝ «Մի պատգամակոր կարող է մրուից ավելի լավ և ճարտար լինել, ինչպես որ Ս. Պողոսն էր՝ Պետրոսի համեմատությամբ։ Բայց քանի որ նրանք եռևուան էի միևնույն պատգամն եց քերում, որեմն նրանցից ոչ մեկը իր մատուցելիք պաշտոնի տեսակետից առավելություն չունի մրուի նկատմամբ։

⁴ Լութերը «Սպողոսի» փոխարեն «Պետրոս» է գրել:

«Ել քանի որ Աստուծ կարգադրությամբ բոլոր եպիսկոպոսները հրար հավասար են և առաջազների տեղն են բնուում, որենի և իրավամբ կարող են հաստատել, թե երևելի Եկեղեցու մեջ մարդկային տաօրինությամբ միայն մեկը մյուսից վերաբառ է:

«...Նրանք . (հոգեւականները) ասուն են, թե պայմի անձնական իշխանությունը հաստատված է Քրիստոսի հետևյալ խորհրդով. «Այդ վեմի վրա պիտի Հինգեմ ին Եկեղեցին» (Մտթ. ԺԶ 18): Առ այդ, նրանք «վեճ» բառով նկատի ունեն Ս. Պետրոսին ու նրա իշխանությունը: Ես բազմիցս հերքել եմ այս տեսակետը: Սակայն ամփոփ կերպով պատեղ էլ կասեմ հետևյալը.

Սուաշին. Արաեք պետք է անպայման սպացոցեն, թե «լեմ» հշանակում է «իշխանություն»: Այս մեկը հրաեք չեն անում և ոչ ել կիարողանան անել. այսուհանդերձ այդ մասին բարբառակեներ են դուրս տալիս իրենց գլխից, և այն, ինչ իրենք փոխում են՝ ուզում են, որ նկատի առնվի իրքի աստվածային կարգավորություն:

Երկրորդ. «Վեմ»-ով չի կարելի նկատի առնել ո՞չ Ս. Պետրոսին և ո՞չ էլ Արա իշխանությունը: Այս բանը ապացուցվում է հենց Քրիստոսի խոսքերով, երբ նա, շարունակելով իր միտքը, հայտարարում է. «Ու դժոխքի դոները ի վիճակի պիտի չինեն այն հայտահարելու»: Արդ, արևի լույսի նման պարզ է, որ ոչ ոք պասի քաղաքական իշխանության ներքո չի կարող հզորանալ Եկեղեցու մեջ և կամ դիմարդել դժոխքի դոներին: Արդարև, հավատացյալների մեծագույն մասը, որ կաշում է պատփի իշխանությունից և իր հոյսը դնում է Արա վրա, կաշկանդվում է դժոխքի ուժեղից, լի է մեղքերով և չարությամբ: Բացի դրանից, պապերից ոմանք, հենց իրենք հերետիկոս են եղել, բաց թողել հերետիկոսական օրենքներ, ապուհանդերձ հաստատ են մնացել իրենց իշխանության վրա: Այս իսկ պատճառով «Վեմ»-ով չի կարելի նկատի ունենալ այն իշխանությունը, որ չի կարող դիմանալ դժոխքի դոներին, այլ՝ դրանով նկատի են առնվազն միայն Քրիստոսն ու Բավարը, որոնց դեմ ոչ մի ուժություն չի կարող:

«Եթե եթե իշխանությունը հաստատուն է,
հակառակ երան, որ շատերը պայքարում
են դրա դեմ, այդ չի նշանակում սակայն,
թե այն դիմադրել է նաև դժոխքի դռներին.
Եթե այդպես է, ապա պետք է ասել, որ
հովանական Եկեղեցին էլ է Կանգուն, ինչ-
պես նաև աշխարհի մյուս բոլոր քրիստոն-
յա Եկեղեցիները:

«Դու, ողորմելի և կույր հոռմեական⁵, նախքան գրելոց պետք է սովորեիր, թե ինչ է հշանակում «դժոխքի դռները հաղթահարելը»: Եթե ամեն տոկունություն հունանում է դժոխքի դռների դեմ տարած հաղթանակի հետ, որեմն սատանայի արքայությունը, իր տոկունությամբ, քանակական տեսակետից ավելի է, քան Աստծունը: Սակայն դժոխազին դռներին դիմադրել՝ հշանակում է ոչ թե մարմնապես գոյություն ունենալ մի համայնքի, ոժի, իշխանության կամ մի ժողովի մեջ,—ինչպես որ դու հոռմեականների համայնքի և միության մասին խոսելիս Եղում ես,—այլ գոյություն ունենալ հաստատուն, ճշմարիտ հավատի մեջ՝ հիմնվերով Քրիստոսի, այսինքն՝ վեմի վրա, այնպես որ սատանայի որևէ ուժ կարող չլինի այդ հավատը սասանել, թեև բազմաթիվ են նրա ուժերը և անհաջիվ երա հարուցած վեճերն ու խարդավանքները, որ առ ի գործ պիտի դմի իր պայքարի համար:

«Նմանապես բավարար չէ, երբ դու փորձու ես բառախաղ անել և ասել. «Թեև պապականությունը երեսն սատանայի իշխանության տակ է ընկել, սակայն նրա իշխանության ներքո միշտ ապրել են ողդամիտ քրիստոնյաներ»: Ես էլ կասեմ, որ թուրքերի մեջ էլ գոյություն ունեն քրիստոնյաներ, ինչպես ամրող աշխարհի մեջ ու նաև նախկին ժամանակներում Ներոնի և այլ բռնակալների իշխանության տակ»:

Ինչ իմաստ ունի այդ խոսքը: Եթե իրապես Քրիստոսի խոսքը վերաբերում է ինեց պայման և պապականությանը, թե ըրբանք են ներկայացնում այն վեմը, որ հաղթում է դժոխքի դռներին, որեմն նրանք երբեք իրավունք չունեն ընկերու սատանայի ազդեցության տակ»:

«Հոռմեականները մեջքերում են ևս մի ասացվածք ի նպաստ իրենց, Տիրոջ այն խոսքը, երբ նա ասում է Պետրոսին. «Արածեցրո՞ւ իմ ոչխարներին»» (Հովի. ԽԱ. 15—17): Այստեղ նրանք այլևս առաջնակարգ ու գերազանց վարպետներ են, երբ անդում են. «Քանի որ Քրիստոս հատկապես Պետրոսին ասաց «Արածեցրո՞ւ իմ ոչխարներին», որեմն նենց նրան էլ բոլորից ավելի իշխանություն տվեց»:

«Բայց մենք ամենից առաջ պետք է իմանանք, որ «արածեցնել» հոռմեականների լեզվով հշանակում է՝ բեռնավորել ու ճնշել քրիստոնյաներին բազմաթիվ վնասակար օրենքներով. եսիսկոպոսական եմիփորունները (pallium) բարձր գներով վաճառել, բոլոր կալվածքներից տուրքերը

⁵ Լութերը նկատի ունի Աստվածայի Ալֆելդի:

(առաջ) բռնությամբ գանձել, սեփականացնել բոլոր հիմնարկությունները, ներման թոյթեր վաճառել, ամեն ինչի վրա հարկեր դնել համակների, կոնդակների, արծինի և մոմի միջոցով⁶, արգելել Ավետարանի քարոզությունը, աշխարհի բոլոր արիեսունցները գրավել Հոռմի ստահակներով, բոլոր դատերը ի նպաստ իրենց լուծեն, բազմացնել վեճն ու երկպատակությունը... մեկ խոսքով՝ ոչ մեկին չթողմել ազատորեն հասել ճշմարտության կամ խաղաղություն ունենալ...»⁷:

Վերոհիշյալ աշխատությունից երևում է Լութերի խոր ատելությունը պապականության հանդեպ, միաժամանակ նրա մասնակի շնչումը գոյություն ունեցող այն ավանդական տեսակետներից, որոնք վերաբերում էին Եկեղեցուն և նրա նվիրապետությանը: Արդարն, նա շեշտը դնում էր Եկեղեցու աներևույթ կերպարանքի վրա, որը խորհրդանշում է հոգևոր միասնականությունը Քրիստոսի բոլոր հավատացյալների և որի գործն է ինեց ինքը՝ Քրիստոս: Ոգեկան քրիստոնեությունն է կազմում միակ և ճշմարիտ Եկեղեցին, որի հոգին հավատն է, իսկ հոգին կարիք չունի նյութեղեն գլխի: Քրիստոս, իբրև գլուխ Եկեղեցու, չի կարող ունենալ իր փոխանորդը. ո՞չ պապը և ո՞չ էլ որևէ մի եափակոպոս չի կարող լինել փոխանորդը կամ ներկայացուցիչը Քրիստոփի:

Անշուշտ կարելի է պատկերացնել, թե ինչ մեծ իրարանցում էին ստեղծում Լութերի նախորդ և այս գրությունները ժողովրդի մեջ: Բաժակն արդեն հորդել էր: Հոռմի մեջ նոյն օրերին, երբ Լութերը գրի էր առնում իր «Յաղագ պապականության» աշխատությունը, խմբագրվում էր պապական մի կոնդակ՝ բանառքելու համար նրան:

Լութերն իր կողքին ուներ հովմանիստներից շատերին, որոնցից էին Ռուիիս Փոն Հուտենը և հոչակավոր Ակարիչ Ալբրեխտ Դյուրերը: Սահմինը փախել էր Ֆուլդա քաղաքի վանքից՝ չուզենալով ապրել Կուրականների ճնշող և անարդար շրջապատում: «Նա էլ էր խիստ քննադատություններ անում Հոռմին, սակայն նրա հովմանացնությունը կրում էր ազգային քնույթ, որովհետև, իբրև գերմանացի, նա ոգում էր պատագրել իր ազգակիցներին Հոռմի և նրա եափակոպոսների դաժան ու կեղեցիչ բռնությունից, մինչդեռ Լութերի հովմատ-

⁶ Պապական կոնդակների տեսակներ, որոնք կրում էին արժիքն կամ մարդամուն կմիջներ:

⁷ Martin Luther, Werke, II, Wien 1983, էջ 8—65.

յացությունը կրում էր ավելի կրոնական բնույթ: Հոտենը գրում էր. «Հոռոմում երեք քաներ վաճառքի են համալսած՝ Քրիստոս, քահանայություն և կանաչը: Հոռոմում երեք քաներ ատելի են՝ ընդհանրական ժողովություն և այն, որ մի օր կրացվել գերմանացիների աշքերը: Երեք չափի են ցանկանում Հոռոմին՝ ժամանակա, տու և պատկրազմի»:

3. Առ քրիստոնեաց ազնուականս գերմանաց: Լութերը 4000 օրինակով տպագրում է սույն աշխատությունը 1520 թվականի գուստոսին, որը մի քանի ամիս հետո, ամբողջությամբ սպասված լինելով, տպագրվում է երկրորդ անգամ:

Լութերը ի տես Հոռոմի և նրա կողմեակիցների կողմից իր դեմ կատարվող անգիտող և անողոք հարձակումների՝ գալիս է այն եզրակացության, որ հոռոմական Եկեղեցին և պապականությունը երեք մտադիր չեն բարեփոխելու Եկեղեցու կամ Եկեղեցականությունը տիտոր վիճակի: Այս իսկ պատճառով նա դիմում է գերմանացի ազնուականներին, որովհետո, ըստ նրա, Եկեղեցու բարեփոխության գործը չի վերաբերում լոկ Եկեղեցականներին, որոնց իշխանությունը տարածվում է նաև աշխարհականների վրա, այլ այն վերաբերում է նաև յուրաքանչյուր քրիստոնեայի, քանի որ յուրաքանչյուր քրիստոնեայի ինքնին մի քահանա է, բոլոր մկրտչածները քահանավ, թե նրանցից որոն մենք կարող են կատարել քահանայի կամ եպիսկոպոսի պաշտոնը: Ընդհանուր քահանայությունը, որի մեջ է մտնում եպիսկոպոսի պաշտոնը:

Վերոնիշչալ աշխատության առաջին մասում Լութերը պատկերավոր բացատրությամբ ցուց է տալիս, թե պապականությունը երեք պարհապես երրորդ է պատշաճ բարենորոգչական որևէ ձեռնարկման դեմ:

1. Գերադասելով հոգեւոր իշխանությունը աշխարհական իշխանության նկատմամբ՝ արքերը հանդիսանալով, որ աշխարհականները դիմեն բարենորոգչական աշխատանքի:

2. Հավանակելով, որ միայն պապը իրավունք ունի մեկնաբանելու Ս. Գիրքը:

3. Գերադասելով պապի հեղինակությունը Եկեղեցական ժողովների նկատմամբ:

Երկրորդ մասում նա թվարկում է այն կարևորագույն նյութերը, որոնք պետք է քննարկվեն ընդհանուր մի ժողովի ընթացքում:

1. Պապականության բարեկարգությունը:
2. Անձնահարտումը կարդինալների ընարադցության և նրանց քանակի նվազեցումը:

3. Պապական պաշտոնության կրծառումը, որովհետո նրանցից շատերն այն գարմանացիների հաշվին:

4. Հարկերի անարդար գանձումը:
5. Եկեղեցական իշխանակությունների կողմից կալվածքների գրավումը, քրիստոնեական խորհուրդների և կրոնական սրարությունների վաճառքը:

Երրորդ մասում նա ասում է մի շարք առաջարկություններ այն մասին, որ իշխանները, ազնվականների կամ քաղաքացիները շատուր է արտօնեն գոյացած տուրքերը փոխացումը Հոռոմին, այլ պետք է վերացվի այդ դրույթումը, պետք է պաքրած միվի պապականների դեմ, որպեսզի նրանք չկան գերմանացի եպիսկոպոսների ու նրանց Եկեղեցական կալվածքների արքային կուլունները: Եպիսկոպոսներները կամ առաջնորդները հաստատումը պետք է կատարվի Գերմանիայում, նրանք եպիփորոն (Pallium) ստանալու համար չպետք է գետակ մինչև Հոռոմ և առ այդ հակառական գոտմարտեր վճարեն: Այս կապակցությամբ նկատի պետք է առնել Նիկոլ ժողովի այն որոշումը, որի համաձայն մի արքեպիսկոպոս կամ երկու եպիսկոպոս կարող են հաստակել մի որիշ եպիսկոպոսի: Հոռոմ պետք է գրադի միայն Եկեղեցական գործերով և ոչ թե մրցակցի աշխարհական տիրակալների հետ Եկեղեցական ճոխություն ձեռք բերելու համար: Հոռոմ կողմից եպիսկոպոսներին պարտադրված ծանր նրումները պետք է վերացվեն: Կայսերի վրա պապի ունեցած իշխանությունը պետք է չնշվի: Նա կարող է միայն նրանց բազարեկ հորածի առաջ, սակայն չպետք է թույլ տրվի, որ կայսրը համբուրգ պակի ուղղերը: Այս տգեղ, ոչ քրիստոնեական սովորությունը բոլորի համար, ի: պետք է արգելվի, որովհետո Քրիստոս ներկ ինքը վկաց իր աշխարհանալու ուղքերը, մինչդեռ նրանք երեք չվացին Քրիստոսին: Համաձայն Պողոս առաքայի յեւադրանքի՝ եպիսկոպոսին ու քահանային իրավունքը պետք է տրվի ամուսնապոտ: Պետք է վերացվեն Եկեղեցական պատիժները, հատ-

Կապես եկեղեցական պատշաճութիւնը արգելը (interdikt): Միայն կիրակի օրերը պետք է կատարվեն եկեղեցական տոները, շաբաթվա մնացած օրերը բոլորի համար աշխատանքի օրեր պետք է լինեն: Ամենօրյա պատարագներ կարեի է կատարել միայն առավոտ կանուխ: Քրիստոնյաներից ոչ ոք չպետք է զրադիւ մուրաց-կանությամբ, մուրացկանությունը ամբողջությամբ պետք է վերացվի: Անուստուժյան արգելքի աստիճանը պետք է և վավեցնել և հասցնել չորս կամ երեք պորտի: Պետք է բարեկարգվեն նաև համայստրանները:

բարձրագույն և առաջամասաւայրից
Քրիստոնեա ազնվականներին ողողված
այս գրությունը մենք ընդունություն է գրու-
նում ոչ միայն բարեկարգության կողմնա-
կիցների, այլև հենց Լութերի հակառա-
կորդների շրջանակում, որոնցից Սաքս-
կայի Գևորգ դուքսը հայտարարում է, թե
շատ բան ճիշտ է Լութերի գրության մեջ
և թե, ի վերջո, որևէ մեկը պետք է մատ-
նանշեր Եկեղեցու կատարվող անկարգու-
թյունները, իսկ եթե շատերը ստիպված են
լոկո՞ւ այս ժամանակ բարերը պիտի ա-
ղաղակեն: Արդարն, Լութերի սույն գրու-
թյան մեջ խոցված է բազմաթիվ սե-
ռունենալի բաղանք Եկեղեցական բարե-
կարգության վերաբերյալ, ինչպես նաև
օրա արդար բողոքը պաստականության
թույ տված ապօրինությունների դեմ:

4. Յաղագ Եկեղեցոյ Բարեկնեան գերութեան: Լուսերը 1520 թ. հոկտեմբերի առաջին օրերին հրապարակ է իշխում ևս մի նոր գրքով, այս անգամ լատիներեն լեզվով՝ *De cœptivitate Babyloniae ecclesiæae* («Յաղագ Եկեղեցոյ Բարեկնեան գրութեան»): Ժողովրդի հիշողութան մեջ դեռ թարմ էր քրիստոնեան ազնվականներին ուղղված նրա գրքի ցեղող տպագրությունը: Այս նոր գրքով առ ձգտում է աստվածաբանների ուշադրությունը հրավիրել նաև Եկեղեցու սրբազն խորհրդադատների կիրառման և վայելեականության վրա: Դրա համար էլ նա այս աշխատությունը գրում է լատիներեն լեզվով:

Քրիստոնյա ազնվականներին ուղղված նրա գրքում դեռևս Ծափական էր պապականության հետ Լութերի հաջորդականականականությունը, որովհետև այնուհետ քննարկված հարցերի ու արված առաջարկությունների առանցքը կազմում էր հետևյալ կերպ. ձերքազատել Եկեղեցին ու Եկեղեցականությունը իրենց սկզբունքին և առաքելությանը անհարիտ վիճակներից ու երևոյթներից: Մինչդեռ «Յաղագն Եկեղեցու Բարեկանեան գերութեան» աշխա-

տությունը ուղղակի հարվածում էր հոռմեական Եկեղեցու աստվածաբանությանը, որով և մեկընդմիշտ բացառվում էր պապականության հետո հաշորության ամեն հնարավորություն։ Հոռմեական Եկեղեցին կանգնած էր մի անխուսափելի հերձվածի սուած։

Հայ Լութերի, ինչպես Բարեկոնք մի ժամանակ գերել էր հրեաներին, այնպէս է այժմ Հռոմը գերուս է Եկեղեցին ու Առարտազակ խորհուրդները, որոնց թիվը նաև լեզուացրել ու հասցրել է յոթի. Մինչդեռ Եկեղեցուն գոյություն ունեցել են միայն եռեկ խորհուրդներ, որոնք հաստատված են ենել Քրիստոսի խորքորդի: Յուրաքանչյուր խորհուրդ մատակարարելու համար անհրաժեշտ է ունենալ հավաս Քրիստոսի նկատմամբ, պատասխան ապարդյուն է Առաջրառությունը: Լութերը պապականությունը համեմատում է Բարեկոնքի թագավորության հետ, որտեղ գերիւած են քրիստոնյաները, և նույնարդ պես է ազատագրել Առանց:

Եկեղեցու այլ երեք խորհուրդներն են՝
Սկրտություն, Ապաշխարություն և Ս. Հա-
ռովանություն:

Լոթերն իր այս աշխատության մկրում
ևսի ափառանք է հայտնում, որ ի հերք
հրատարակել է Աերման թղթերի մասին
մի գրություն այնպիսի մի ժամանակ, երբ
ժղովուրդը դեռևս չէր ձերքազատված
և նոտիապաշտությունից և մեծ հարգանքը
էր տածում նոութեական Եկեղեցու հան-
դեպ, որի պատճենով էլ մասամբ նա ար-
դարացի էր գտնում այդ թղթերի կիրա-
ռումը: Սակայն պապականների տարած
աշխույժ աշխատանքը ի պաշտպանություն
Աերման թղթերի՝ Լոթերին բերում է այն
համոզմանը, որ այդ Աերումները որիշ
բան չեն, եթե ոչ նոութեական Եկեղեցու
շղովորթ հոգևորականների կողմից հաս-
տառված խարերապություններ: Խակ պապի
առաջնության կամ գերագահության ջա-
տագովությունը նրան մղում է հաճարու-
այն եպրակացության, որ «պապականու-
թյունը Բարելոնի թագավորությունն է, իսկ
նրա իշխանությունը՝ հզոր որսորդ Ներ-
ոնթի» (Ծնն. Փ. 8):

ա. Ա. Հաղորդության բաժակը պետք է առվի նաև գորովորին: Անհինո՞ն՝ ս. Հա-

⁹ M. Luther, Die reformatorischen Grundschriften, Band 3, München 1983, 49, 10.

Հորդությունը պետք է մատակարարվի երկու ձևով՝ Տիրոջ մարմնով և արյամբ։ Դրավունքը չկա միայն հացու, այսինքն՝ Տիրոջ մարմնով Հաղորդություն տպառ, իսկ գիճին էլ, ըստ կաթոլիկ Եկեղեցու սովորության, վերապահելու միայն քահանաներին։ Այս մասին հատակորեն գրված է և ավետարաններուն, և՝ Պողոս առաքյալ՝ Կորնթացիներին ուղղված Ս. Թղթուն (Գլուխ ԺԱ, համար 17—34)։ Նման մի զանցառում նոյնինկ իրեշտակները իրավունք չունեն կատարելու, ել որ մնաց պար կամ մի ժողով թրամանքի այն։ Այսինուն, և Հաղորդության քածակը զանցառով հավատացյալներին մի նետակ կապանքի տակ է առնվում ամրող խորհուրդը։ Իսկ ինչ վերաբերում է գոյացափոխությանը (Transsubstantiation), Լութերը չի ընթեռում այն առարկելով, որ հացն ու գիճին նվիրագործվելոց հետո՝ ճշմարտապես լինում են Մարմին և Արյուն Քրիստոսի, բայց պահում են իրենց հոգիական հատկանելիքը։ Դրանք հյութապես շարունակում են մնալ հաց և գիճի, սակայն ստանում են հատուկ մի գործություն և ոչ թե, համաձայն հոգմետական Եկեղեցու վարդապետության, դրանք այլև հաց և գիճի չեն ըստ էության (substantia), այլ՝ ըստ արտաքին հատկանիշների (Akkident)։

Ս. Հաղորդությունը պետք է խորհրդացի Տիրոջ Վերջին ընթրիքը, հետևաբար, ինչքան պարզ կերպով ներկայացվի այն, այնքան հարազատ կմնա Վերջին ընթրիքի ոգուն։ Այս առնչությամբ արտաքին բոլոր ձևերը, շքեղ հանեներձները, երգերը կամ այլևայլ արարողությունները ոչ մի հշանակություն չունեն։ Միակ բանը, որ հաճելի է Աստծուն, հավատացյալների աղոթքն է, իսկ ընթրիքի հիշատակությամբ պատգամվում է մեղքերի թողություն, որն իրականություն դարձավ Քրիստոսի իսկ մասին։ Այս մասին Լութերը հետևյան է գրում. «Հիսուս ասում է. «Եմ խորեքը հոգի են և կրունք»» (Հովի. Զ 64)։ Մրանով նա ցուց է տախի, որ խոսում է հոգեկր ճաշակման (ταπειսατίο Spiritalis) մասին։ Նա, ով հոգեպես է ճաշակում, ընդունում է կյանքը, մինչդեռ իրեաները նըկատի ունեն «մարմնավոր ճաշակում» և դրա համար էլ վիճում են Հիսուսի հետ։ Միայն հավատով եղած ճաշակումը նշանակում է պարգևում, ինչ որ Ս. Օգոստինոսն էլ ասում է. «Ենչի համար ես պատրաստում ստամբուդ ու ատամեներդ։ Հավատա միայն և դու արդեն ճաշակած եղար խորհուրդը»։ որովհետև, ինքնին, խորհրդի

առկայությունը չէ, որ կյանք է պարգևում, այլ՝ հավատը։ Արդարն, շատ-շատերը անարժանաբար ճաշակում են դրանից, և այդ չի հշանակում, որ նրանք ել կյանք ունեն»։

բ. Մկրտության վերաբերյալ Լութերի տեսակետները չեն շեղված Եկեղեցու դավանածից։ Ավելի ուշ, 1528 թվականին գրած իր մի գրության մեջ նա հարցական տակ է դնում երեխաների մկրտության աղջիկ կերպուր տված հավատի վկայության հարցը։ Իսկ պատեղ նա պաշտպանում է նաև մանկամկրտությունը։

գ. Ապաշխարությունը, իբրև խորհրդական մկրտության շնորհի։ Նա խառորդեն դատապարտում է այն եկեղեցականերին, որոնք այս աղջիկ չարաշանում և աղավաղում են Քրիստոսի հետակա խորքերի իմաստը։ «Ենչ որ կապեր երկրի վրա, թող կապված լինի երկնքուն, և ինչ որ արձակեր լինի երկնքուն» (Մտթ. ԺԸ 18)։ Կամ «Եթե մեղքը մեղքեր, նրանց ներված կիճին, եթե մեկի մեղքերը կապեր, կապված կիճին» (Հովի. Ի 23)։ Այս խորքերը եկեղեցականերին իրավունք են տվել ամեն տեսակ բղնություններ գործելու և մեղքերի թողություններ վաճառելու, մինչդեռ Քրիստոս,—ասում է Լութերը, —իր Եկեղեցուն ոչ թե միրակալությունն հաստատեց, այլ միայն ծառայության պաշտն, ինչ որ առաքյալ է և հաստատում ասելով. «Մարդիկ թող համարեն մեզ իբրև պաշտոնացը Քրիստոսի և տեսնեներ Աստուծո խորհուրդների» (Ա. Կորնթ. Դ 1)։ Հետևյալը «կապերու և արձակելու» պատգամը ծառայության մի հրավեր է, որպեսզի ծառայության կոչված եկեղեցականը օգնի ապաշխարողին՝ ձեռք բերելու մեղքերի թողություն։ Եթե պաշխարողը լուս է այդ պատգամը, զգաւոտանում է և գիտակցում, որ ինքը միայն հավատով և իր մեղքերից արձակվելով կարող է երկնքուն և արձակում ստանալ։ Լութերն ընդունում է նաև խոստվանեցի դրությունն, քանի որ դրա մասին Ս. Գրքում ակնարկություն կա (Մտթ. Գ 6, Ա. Հովի. Ս. 9, Հակոբոս Ե 16)։

դ. Դրոշմի մասին նա համարյա ոչինչ չի գրում, որովհետև ավելորդ է համարում նկատի ունենալ այն իբրև խորհրդոր. Հայ նրա, եթե ձեռք դնելը երեխաների; Բիշվանի կամ տարեցների վրա (Մտթ. Ժ 16, Գործ Ը 17, Ժ Թ 6, Զ 6, Մրկա. Ժ Զ 18, Ա. Տիմ. Ե 22) կարելի է նկատել իբրև խորհրդոր, այդ դեպքուն ինչո՞ւ հաց ու

տեղն է, բարող խոսելն է խորհուրդ չենք համարում:

Ա. Ամուսնության մասին էլ Լութերը համաձայն չէ Եկեղեցու վարդապետությամբ, որովհետև նրա համար այս մեկն էլ չի կարելի խորհուրդ համարել: Նա մեջքերում է Պողոս առաքյալի այն խոսքը, թե՝ «Երկուար պիտի լինեն մեկ մարմին: Այս խորհուրդը մեծ է» (Եփս. Ե 32): Նա ասում է, որ շատերը սիամիմամբ այս համարականությունից կենացով՝ խորհուրդ են համարել ամուսնությունը, մինչդեռ «խորհուրդ» բառի փոխարեն հունարեն բնագրում գրված է «mysterion», որը լատիներենում փոխանակ «mysterium» բարգմանկերու, բարգմանիլ է «sacramentum»: Mysterion բառով առաքյալը մկանի ունի Քրիստոսին (Ա. Տիմ. Գ 16) և եփեսացիներին ուղարձ իր թղթում էլ նա ունեցում է Քրիստոսի նետ և ոչ թե ամուսնության: «Այս խորհուրդը մեծ է, բայց ես ասում եմ Քրիստոսի և Եկեղեցու վերաբերյալ (Եփս. Ե 22):

Լութերը դեմ է ամուսնալուծման, սակայն այս մասին նա արտապոց զաղափարներ է արտահարում. օրինակ՝ նա ամուսնական կյանքում անկարողության հարցը քննարկելիս գրում է. «Եթէ մի կին ամուսնացած է անկարող մի տղամարդու նետ, բայց չի կարող կամ էլ, հավանաբար, չի ուզում դատարանի առաջ, բայց օրենքի, վկայություններով և աղմուկ հարուցելով փաստել իր ամուսնու անկարողությունը, սակայն ուզում է զավակենար ունենալ կամ էլ կարող չէ ժոմկապ մնանինց պետք է անի. ես նրան խորհուրդ կտայի ամուսնալում պահանջել իր ամուսնոց՝ ուրիշի նետ ամուսնալու համար, իսկ եթե ամուսնու շիմամածայնի, այն ժամանակ ես նորից խորհուրդ կտայի նրան, որ իր մարդու (ոչ թե ամուսնու, որովհետև այս դեպքում ամուսինը իր հետ միևնույն տաճ մեջ բնակվող անձն է միայն) համաձայնությամբ հարաբերություն անի մի ուրիշի նետ, օրինակ՝ հենց իր ամուսնու եղբոր նետ զաղտնորեն ամուսնանա, որպեսզի իր ունեցած զավակերի հայրը մկանուի այն անձը, որին ժողովուրդը ճանաչում է իբրև այդ կեռոց ամուսինը»¹¹:

Գ. Ջեռնադրությունն էլ Լութերի համար խորհուրդ չէ, բայց որ նա պնդում է բոլոր քրիստոնյաների ընդհանուր քահանայության վրա: Քրիստոսի Եկեղեցին, ըստ Լութերի, չի ճանաչում այս խորհուրդը, այլ

ըստ նրա, այն հնարյած է պապական Եկեղեցու կողմից: Քահանայական ձեռնադրությունը մի տեսակ Եկեղեցական ծես է ի շարու այլ ծեսերի, որոնք սահմանված են Եկեղեցու հայրերի կողմից, ինչպես օրինակ՝ անոթների, հանդերձների, ջրի, աղի, մոմի, բուլսերի, տմերի, գիճու և սրբաց նման բաների օրինությունը:

Ե. Վերջին օծումը, իբրև խորհուրդ, ըսումնեան ընդունելի չէ Լութերի կողմից: Եկեղեցին այս խորհուրդը հիմնավորում է Հակոբոս առաքյալի հետևյալ խորքերի վրա. «Հիփանոր է ձեզնից մեկը, թող կամ չի Եկեղեցու երեցներին, և նրա վրա թող աղոքը անեն, թող լուղով օծեն նրան Տիրոջ անունով: Եվ հավատով արված աղոքը կփրկի հիփանորին, ու Տերը նրան ուղի կկանգնեցնի» (Հակոբոս Ե 14—15): Այստեղ Լութերը նոյնիսկ հարցականի տակ է դնում առաքելական այս թղթի վավերականությունը՝ ջշելով, որ իրենից առաջ էլ շատերը կավաճել են դրա վրա: Աղրաքն, Երազմ Ռոտերդամցին Շունապես չի ընդունել դրա վավերականությունը, և Եկեղեցու ակադեմական ժամանակաշրջանում վեճեր են եղել դրա մասին, մինչև որ ի մերօն այն ընտունվել է Նոր Կոտականի կանոնի մեջ: Եթե զանց է անենք վավերականության պարագան, — ասում է Լութերը, — մի առաքյալ իրավունք չունի մի խորհուրդ հաստատելու: Այս կապակցութամբ նա գրում է.

«Եթե նրանք (Եկեղեցաններու) առաքյալի ասածք ճշմարիտ և բուրի համար պատուավորիչ են համարում, ունենան ի՞նչ հետինակրությամբ ձեռակունում են այն ու նրա դեմ գործում: Ինչո՞ւ նատարում են միայն մեկ վերջին օծում. եռոր առաքյալի ցանկությունն է բնոհանուածես կատարել օծում. ոռովինետև նա չի ուսում. ոռան մերժինը իմի և միան մահամերձների վրա կատարվի, աղ նա հատակորեն ասում է «Եռոր մեկը միփանը է»: Նա չի ասում «Եռոր մեկը մահամերձ է»: Ես ան կատիքին եմ, որ այս օծումը այն միևնույն օծումն է, որը վերագույն է առաքյաններին. «Նրանք բազում միփանուների օծում են տղով ու նրանց ոժեկում» (Մատեն Զ 13): Դա հասուն մի սովորություն է Եղիսաբետական համական համաւնքում. ոռով առաքանելոյ հոաշքներ են առծում միփանուների վրա: Աղ սովորությունը. սանան. վաղուս առղեն վերացել է: Նաև ինք՝ Հիսուս, իր հավատացաւմերին հիսանություն տվեց «օձեր հատձելու, միփանուների վրա ձեռք դնելու» և աղն: Եվ զառմանայի է, որ նրանք այս խոսքերի մի-

ման վրա, որոնք իրենց ազդեցությամբ և բովանդակած պատճամով հայ և հման են Հակոբոս առաքյալի խորեղին, խորհուրդներ շինատառեցին: Հետևաբար պատճեն կոչված «Վերջին օծումը» ոչ թե մի խորհուրդ է, այլ՝ Հակոբոսի կողմից տրված մի խրան, որին ցանկացողը կարող է հետևել»¹²:

Խնչակն երկու է, «Յաղագ Եկեղեցոյ Բարերենեան գերուրեան» աշխատովայական իշխակն առանձողություն էր դեպի եկեղեցական ամփոփակելի մորթիա: Այսուղ ամփոփած մորթը, մեղափոփական լինելոց ավելի, կարենի է առեւ եերեւիկուական էին, ինչքան էլ արդարացի լինենի Լութերի մեղադրամքները պայմանագրան դեմ: Անդրադառնապով համապետ Լութերի կողմից եկեղեցական խորհուրդների շարաշահման՝ պետք է հցել, որ նա ինչքան էլ ջանար հիմնավորել այն տեսակետը, թե Եկեղեցու Ակզրենական ժամանակաշրջանում գոյություն են ունեցել միան երկու խորհուրդներ՝ Մկրտություն և Ս. Հաղորդություն, որովհետու այս երկուսը ուղղակի Քրիստոսի կողմից էին համապատմել, աւելուամենակից աւելոր է նկատի առներ նաև այն, որ Ս. Գրքում մյուս բոլոր խորհուրդների մասին էլ ակնարկություն կա, ինչպես և եկեղեցական հայութի գործություններում: Այդ խորհուրդները բոլոր պատմական եկեղեցների կողմից էլ ընդունված են իշխակ առանձատորություն խորհուրդները: Լութերը, սակայն, պայմանագրության սարքած համաձառնենից որորության ու հոումեական եկեղեցական ապահոված առաջեկաց գոված իններու ատանառույթ թվենում է ծալուակեղութան մեջ՝ գույնու իր վառութիւնը գնուռ:

5. Յաղագ առառուեանն ընկառնեի: Լութերի 1520 թվանակի գիտաւոր գրությունների վրա զայս է ամենաայր լատիներեն և գերմաներեն լեզուներով խորագրված ար գործ ևս. որն արուեն նուն տարիւա հոյեմբեր ամսին հրապարակի վրա էր:

Թեսարքված պայմանական Կարլ Ֆոն Միտինցի¹³ Լութերն ար գործից կրցում է նաև Հոռոմի Առաքյալ պատճեն ուղղված մի նաևն, որի մեջ ասում է, թե ինքը տարեթություն է դասում պատճ և պատճ խորհրդակաների միջև, որովհետու Առու ծ պատճ, իր նախորդություն նաևն, վատ

ամենավորություն չէ, առկայի նրա խորհրդակաները, այսինքն՝ պատճական կունիան, 19ված են շատ ավելի պատճականությամբ, քան Բարեկոնն ու Սորոմը: Եսկ հոումեական եկեղեցին, որ մի ժամանակ ամենից ավելի տուր համարված Եկեղեցին է եղել, այժմ վերածվել է խառնիքական և պատճական մի քարայրի, նողկան պատճական և դոորքի¹⁴: Այս իմ պատճառով Լութերը պերում է, որ ինքը երբեք տրամադիր չէ հետու կոչելու իր արտահայտած մորթը պայմանականության և հոումեական Եկեղեցու հետամամբ:

Այսունեւու «Յաղագ առառու պատճեանն ընկառնեի» գրքում նա ամփոփում է իր տեսակետները ըրհառունա մարդու ապրեակերպի և օրենքի հանդեպ նրա ունեցած պարտավորությանց մասին՝ մեկնելով պարադրամին թվացող հետևյալ երկու գաղափարներից:

— Քրիստոնեան ամեն ինչի վրա կարգած է իրքն մի պատ իշխան և հպատակ չէ, ոչ որի:

— Քրիստոնեան բոլորի համար ժրածան սպասակիր է և բոլորին ենթական¹⁵:

«Այս երկու մորթեն էլ հստակորեն երեւում են Պողոս առաքյալի մոտ. «Ազատ էի բոլորից և իմ անձը որի բոլորի ծառայութան համար» (Ա. Կորնթ. Թ 19): Նոյն անը՝ «Եվ ոչ որի պարտական մի՛ մնացեա, բացի միմանց սիրելուց» (Հոռոմ. Ժ 8): Անը սպասական ինքնին հոժար է ծառայություն մատուցելու և ենթակւելու նրան, ուս միում է: Դրա համար էլ նենց Քրիստոնի մասին է ապահած՝ «Աստված ուղարկեց իր Ոռոուն, որը ծնվեց մի Կոնչից և մտավ օրենքի տակ» (Գաղատ. Դ 4):

«Համականակու համար հակունայա այս ուրա արտահարությունները պատճեան և ծառայութան մասին՝ ի մտի պետք է ունենանք այն, որ լուրաքանչւություն քիսա- լութեան երկու ունությունները է բաղկացած՝ նոգելոր և մարմանուո: Ակատի ունենալով նոգին՝ նա կոչվում է հոգելոր, մի ոռու և ներքին մարդ, իմ նկատի ունենալով միսն ու արուեր՝ նա նշշնում է մարմանուո, մի ծեր և արտաքին մասու: Այս տարեթությունների պատճառով էլ Ս. Գրքում նրա մասին զորավոր Կերպով իրար հակասող հախաղասություններ կան, ինչպես որ

¹² Ricardo Garcia—Villoslada, նշանած աշխատաթյուններ, էջ 518.

¹³ M. Luther, Ausgewählte von Karl Gerhard Steck, Frankfurt/M 1959, էջ 75.

մատնացուց արեցի ազատության և ծառայության մասին խոսելիս:

«Արդ, Ակնենք ներքին և հոգևոր մարդուց՝ տեսներու համար, թե ինչ է հարկավոր, որպեսզի նա դառնա բարեպաշտ և ազատ էլ կոչվի։ Սրբարձ, բացահայտ է, որ արտաքին ոչ մի բան չի կարող նրան քրիստոնյա դարձնել, որովհետև նրա բարեպաշտությունն ու ազատությունը, ինչպես նաև բարեկործուն ու գերվածությունը ոչ մարմնական են և ոչ էլ արտաքին։

«...Այսպիսով, հոգու համար ոչ մի օգուտ չի ունենա, եթե մարդ իր մարմնի վրա օրինված հաներձներ դնի (ինչպես քահանաներն ու եկեղեցականներն են անում) կամ եթե նա մարմնապես եկեղեցիներում և սուրբ վայրերում գտնվի, շրջներով աղոթք մատուցի, պահեցողություն անի, ոխտագնացություն կամ բարի գործեր կատարի, որոնք լոկ մարմնի միջոցով և մարմնի մեջ կարող են իրագործվել։ Սակայն այն, ինչ հոգուն բարեպաշտություն է շնորհում և նրան ազատություն բերում, բոլորովին տարբեր բան պետք է լինի, որովհետև վերոհիշյալ բոլոր սովորություններն ու արարողությունները որևէ չար, կերծավոր ու շողոքորթ մարդ էլ կարող է կատարել։

«Հոգին, աւական, միայն սուրբ Առաստարանում, այսինքն՝ Քրիստոսի քարոզած աստվածային խոսքի մեջ է ապրում, անմեղ է, ազատ է և քրիստոնյա։ Բացի Սուրբ Գրքից, նաև որիշ ոչ մի տեղ չունի՝ ո՞չ երկրորդ և ո՞չ էլ երկրի վրա՝ պահելու համար հիշյալ հատկանիշները, ինչպես որ Հիսուս ինքն իսկ ասաց. «Են իսկ եմ հարությունն ու կանքը, ով հավատում է ինձ՝ նա հավիտյան պիտի ապրի» (Հովի. ԺԱ. 25): Կամ «Են եմ ճանապարհ, ճշմարտությունն և կյանք» (Հովի. ԺԴ. 6): Նմանապես՝ «Մարդ միայն հացով չի ապրի, այլ՝ ամենայն խոսքով, որ դուքս է գալիս Աստուծոն քերանից» (Մոթ. Դ 4): Այդպես էլ մեզ համար այժմ պետք է պարզ լինի, որ հոգին ոչ մի բանի պետք չունի, բացի Աստուծոն խոսքն է, որ օգուտ կրերի նրան և որիշ ոչինչ։ Իսկ եթե հոգին արդեն լցված է Աստուծոն խոսքով, այն ժամանակ այլև ոչնչի կարիք չի ունենա, որովհետև նա այդ խոսքի մեջ առատորեն գտնում է բավականություն, կերակոր, որախություն, խաղաղություն, լուս, արվեստ, արդարություն, ճշմարտություն, իմաստություն, ազատություն և ամենայն բարիք։ Սաղմոսագրքով, հատկապես ԾԾԸ սաղմոսում, Հիսուսում

ենք, որ մարգարեն, բացի Աստուծոն խոսքից, որիշ ոչ մի բանի չի ձգտում։ Իսկ Սուրբ Գրքում ծանրագույն պատուհան և Աստուծոն բարեկության արտահաջորդություն է համարվում այն, եթե Աստված իր խոսքը վերացնում է մարդկանց միջից, սակայն եթե նա իր խոսքը է ուղարկում, դա համարվում է չգերազանցված մի մեծ շրջուրդ, ինչպես որ հաստատվում է ԾԶ սաղմոսի 20-րդ համարում։ «Նա իր խոսքըն ուղարկեց, որպեսզի բժշկի նրանց»։ Քրիստոսի պաշտոնն էլ որիշ բան չէր, եթե ոչ Աստուծոն խոսքը քարոզելը։ Նույնական և բոլոր առաջամերը, եպիսկոպոսները, քահանաները ու հոգևոր դասը Կոչված են Աստուծոն խոսքի սպասավորությանը, թեն այժմ, դժբախտաբար, այլ է դրույթները։

Հայ Լութերի, մարդու Անրաշխարհին, պայմանը՝ Ենթին, հոգևոր մարդուն, դրսից ոչ ոք չի կարող ազատություն տալ, ո՞չ արտաքին այն պալմանեները, որոնց մեջ նա ապրում է և ո՞չ էլ ծեսերն ու բարեպաշտական տվյալությունները, այլ միայն՝ Հիսուսի Ավետարանը՝ մարդացած, չարշարված, հարություն առած և փառակրոված Աստուծոն Որդու պատգամը։ Այդ պատգամը միայն հավատով կարելի է ըմբռել։ Այստեղ նորից շեշտվում է հավատով արդարանալու լուրերական տեսակետը։ Հիսուս փեսան է, մարդու հոգին՝ հարսը, իսկ հավատը՝ փեսան ու հասուհրար միացնող ամուսնական մատանին։ Հավատով արդարանալու մասին Լութերը մեջքերում է նաև Պողոս առաջարի հետևյալ խոսքը։ «Արդարացման համար սրտով պետք է հավատալ» (Հովի. Ժ 10):

Մարմինը, սկայան, նուև առատությունը չունի, ինչ որ հոգին։ Քրիստոնան ազատ է բայց հոգու, սկայան բայց մարմին՝ նա ծառաւ է իր հոգուն։ Դուք համար էլ նա պետք է առա պահի, հնում նատառի, աշխատի, կոթի իր մարմինը, որպեսօք այն արգելք շիանդիսանա հոգու ազատությանը։

Մարմնի ճնշումը կամ գերմանական բարեկարգություն հոգեկան ազատությանը՝ Լութերի հետագայում քննադատել է օգուածացիների ապատամբությունը, իբրև մի ձգտում դեայի «մարմնական» ազատագրում։

Ծանոթացման կարգով Անրաշխարհինը Եկեղեցու բարեկարգության վերաբերակ Մարտին Լութերի գլխավոր գրությունները։ Դրանց մեջ, բնականաօպա, շատ բան ընթատելի կամ վիճելի է, ինչ որ սույն

Բոդվածում որոշ չափով մատևանշվեց: Սակայն մեկ բան պետք է մեզ համար հստակ լինի. այն, որ Լութերը իր ժամանակաշրջանի ամենահանդուգն և մեղափոխական մտածողն է եղել, որի հետապնդած ազնիվ նպատակն էր բարեկարգել Եկեղեցին և պայքարել գոյություն ունեցող բարացած ու հետադիմական մրցքերի և միջնադարյան կողմից հավատի դեմ:

Այսօր էլ Լութերը մեզ առիթ է տախի մտածելու և խորհրդածելու կրոնական մի շարք հարցերի մասին, որոնց վրա մենք համայն բավարար ուշադրություն չենք դարձեն: Հետևաբար նրա գործերի թարգմանությունը մեծ հապատ կիմի մեզ համար՝ ճշգրտորեն ճանաչելու և գնահատելու գերմանացի պատճեններին:

